ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. մարտի 9-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. 06/03/22թ. «Փյունիկ» - «Արարատ-Արմենիա» (ՊԼ105) խաղի վերաբերյալ.

1) *Խաղի 93-րդ րոպեին «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Դմիտրի Գունկոյի ոչ սպորտային վարքագիծ, որի համար հեռացվել է խաղադաշտից:*
2) *«Արարատ-Արմենիա» ՖԱ գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանի ոչ սպորտային վարքագիծ խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ:*
3) *«Արարատ-Արմենիա» ՖԱ երկրպագուների կողմից խաղի ժամանակ երկու ճայթրուկի օգտագործում:*
4) *«Արարատ-Արմենիա» ՖԱ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հետխաղյա մամուլի ասուլիսին:*
5) *«Փյունիկ» ՖԱ երկրպագուների կողմից խաղի ժամանակ ճայթրուկի և պայթուցիկ հրավառության օգտագործում:*

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

1) Ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 11.03-րդ կետով՝ մրցավարի կողմից «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Դմիտրի Գունկոյի 1 խաղ որակազրկումը թողնել ուժի մեջ:

2) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» ՖԱ գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետով «Արարատ-Արմենիա» ՖԱ գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն» և «Արարատ-Արմենիա» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

3) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» ՖԱ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի և 28-րդ հոդվածի 28.04-րդ կետը, 29-րդ հոդվածի 29.01 կետը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետով՝ «Արարատ-Արմենիա» ՖԱ ակումբին (առաջին անգամ) տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

4) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» ՖԱ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 28-րդ հոդվածի 28.04-րդ կետը, 29-րդ հոդվածի 29.01 կետը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 58-րդ կետով՝ «Արարատ-Արմենիա» ՖԱ-ին (առաջին անգամ) տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

5) Հաստատված համարել «Փյունիկ» ՖԱ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 28-րդ հոդվածի 28.04-րդ կետը, 29-րդ հոդվածի 29.01 կետը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետով «Փյունիկ» ՖԱ-ին (առաջին անգամ) տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

2. **24/02/22թ. «ՈՒրարտու» - «Նորավանք» (ՊԼ091) խաղի ընդմիջման ժամանակ գնդակ վերադարձնող երեխաները մտել են դաշտ և սկսել են խաղալ գնդակով, մարզչին զգուշացնելուց հետո երեխաները ազատել են խաղադաշտը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Ղեկավարվելով ՀՖՖ կանոնակարգի 12-րդ հոդվածով՝ «ՖԱ ՈՒրարտու» ՄՀԿ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել:

3. **25/02/22թ. «Ալաշկերտ» - «Արարատ-Արմենիա» (ՊԼ094) խաղի ընթացքում «Ալաշկերտ» ՖԱ-ի կողմից տեղադրված չի եղել հովանավորների վահանակը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 28-րդ հոդվածի 28.04-րդ կետով և 40-րդ հոդվածի 46-րդ կետով՝ «Ալաշկերտ» ՖԱ-ին (առաջին անգամ) տուգանել նվազագույն աշխատավարձի 30000 ՀՀ դրամի չափով:

4. **02/03/22թ. *«Նորավանք» - «Փյունիկ» (ՊԼ096) խաղը սկսվել է 23 րոպե ուշացումով, ստուգման ժամանակ պարզվել է, որ շտապ օգնության անձնակազմի մոտ բացակայում է դեֆիբրիլյատորը, որից հետո հրավիրվել է շտապ օգնության նոր անձնակազմ, որը ապահովված է եղել դեֆիբրիլյատորով:***

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Նորավանք» ՖԱ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ պրոֆեսիոնալ մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 25.20-րդ կետը և ղեկավարվելով ՀՖՖ կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետով «Նորավանք» ՖԱ-ին (առաջին անգամ) հայտարարել նկատողություն:

03/03/2022թ «Շիրակ» -05 թիմի առաջնության ընթացքում մրցմանը սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելու դիմումի քննարկում

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» ՖԱ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Շիրակ-05» թիմին հանել առաջնությունից, «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի՝ 40.000 ՀՀ դրամի չափով:

5. ***05/03/2022թ «Ֆյունիկ-1-09» - «Օնոր Ակադեմիա-08» Խաղը չի կայացել «Օնոր Ակադեմիա-08» թիմը չի ներկայացել խաղին*** :

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր» ՍՊԸ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Օնոր Ակադեմիա-08» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, «Օնոր» ՍՊԸ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

6. ***02/03/2022թ «Աղբյուրակ-1-08» - «Ակադեմիա-1-09» Խաղը չի կայացել «Աղբյուրակ-1-08» թիմը չի ներկայացել խաղին*** :

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել ***«Ակադեմիա-1-09» թիմի*** կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ ***«Ակադեմիա-1-09»*** թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, ***Աղբյուրակ ՍՍ ՀԿ ակումբին*** տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

7. ***03/03/2022թ «ՈՒրարտու-2-06» (Մ-17Բ) առաջնության ընթացքում մրցմանը սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելու դիմումի քննարկում*** :

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «ՖԱ ՈՒրարտու» ՄՀԿ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՈՒրարտու-2-06» թիմին հանել առաջնությունից, «ՖԱ ՈՒրարտու» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի՝ 40.000 ՀՀ դրամի չափով:

8. ***02/03/2022թ «Օլլ ինքլուզիվ» - «Եղվարդ ֆզ» (ՖՁԱԽ027) Խաղը չի կայացել «Օլլ ինքլուզիվ» թիմը չի ներկայացել խաղին:***

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Օլլ ինքլուզիվ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կանոնակարգի 48-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Օլլ ինքլուզիվ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:5 հաշվով, «Օլլ ինքլուզիվ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար:

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան

Արման Ալաբերքյան